ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02. 02-21

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29.01.2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Ա. Կարապետյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում «Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ»ՊՈԱԿ-ի միջին տարեկան 26 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի միջոցով վճարել կրթաթոշակ, որը կազմում է մինչև 1 482 000 (մեկ միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ :

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Ք. Արմավիր, Աբովյան 170
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900338000517
Հ/Հ 900011034270	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Կարապետյանի
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ